

ԲԱԺԱՆՈՐՂ ԱԳՐՈՒԹԻՒՆ
 ուղարկոյ համար
 Տարեկան 12 թ.
 Վեցսուսանի համար Տարեկան 15 »
 Վեցսուսանայ 8 »
 Ամերիկայի համար Տարեկան 3 ժր.
 Վեցսուսանայ 1.50 »
 ԳԱՆԻՍԻԿ ՎՃՐՆԵՐԻ
 Երկուսուսանի համար 40 սանթիմ
 Ե. իսկ վերջին երեսի համար 20 սանթիմ Ե. երկուսուսանի անգլիական համար 20 Օլո զեդը կըլայ:

ՇԱՐՋՈՒՄ

Նամակ և գրամ գրկեց
 Խմբագրութեան հասցեին
 —
 Редакция на възгникъ
 «Шаржумъ»
 Варна.
 Redaction du journal
 «Charjoum»
 Varna (Bulgarie)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔԵԱԲԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՈՐԵՐԸ

Մասնատեսի համար ձեռքի
 (Գ Ի Ն 20 Ս Ա Ն Թ Ի Մ)

Պուղարկոյ համար ձեռքի
 (Գ Ի Ն 15 Ս Ա Ն Թ Ի Մ)

ОТГОВОРНИКЪ: Д-ръ Т. Хр. Стояновъ

ԿՐԿԻՆ ՍՊԱՌՆԱԼԻՔ

Ասեան կազմեցէք, լրտեսներին արգարացրէք և միացէք, թէ չէ արտասահմանի հայ ժողովուրդը ստակ չը պիտք է տայ յեղափոխական կուսակցութիւններին, և միմիայն դպրոցի ու որբանոցների համար պէտք է աշխատի: Ահա բաշխօգուկ ու դիմակաւոր հայրենասէրների իմաստալի բարոյները ու զուտանցանքները:

Որբերին ու դպրոցներին պէտք է օգնել. ի հարկէ այդ հայ ժողովրդի կարեւոր պարտականութիւններից մէկն է: Արտասահմանի, մանաւանդ Եւրոպայի մէջ ապրող հայ գաղութները վերջին տասնեակ յեղափոխական տարիների մէջ, շատ շնչին զոհողութիւններ են արել յեղափոխութեան համար, և նրանք պարտաւոր են գոնէ որբանոցներին օգտակար հանդիսանալ. ուստի մենք զուարճանում ենք, երբ դըժմագլուխ պարոններ, փոխանակ արտասահմանի հայութիւնը ուղղակի որբերին օգնութեան հրաւիրելու, ի միջի այլոց սպառնում են և յեղափոխականներին դրամ չը տալ, եթէ ատեաններ չը կազմվեն և միութիւնը չը կայանայ: Այս մտքով սպառնալիքից պարզ երեւում է թէ սպառնացողներն էլ յեղափոխութիւնը ներկայումս աւելի անհրաժեշտ են համարում՝ քան դպրոցները և որբանոցները. և շատ պարզ է՝ որ այդպէս պէտք է մտածելն, որովհետեւ քանի հայը ազատ չէ, Հայաստանի մէջ շարունակ դպրոցի պակասութիւն պէտք է լինի և շարունակ տասնեակ հազարներով անօթիներ և որբեր: Իսկ այդ ցաւերին և ուրիշ շատ ցաւերի միակ և արմատական դարմանը յեղափոխութիւնն է:

Ուրբան ինչու սպառնալ որ արտասահմանի հայութիւնը դրամ չի տայ, եթէ ատեան չը կազմվի և միութիւն չը կայանայ, Շատ պարզ

է. նախ հարկաւոր է մի քանի լրտեսների արտաքին մարտերը՝ օյինքալուծիւններով, ինչու չէ կարելի նախ միութիւնը կայացրնել և հասպատեանը, յեղափոխական ատեանը, բայց ոչ զանազան չեղոք և անգոյն մարդկանցից կազմված ատեանը:

Ինչո՞ւ չէ առաջարկվում լրտեսներին թողնել ասպարէզը, մինչեւ յեղափոխական միութիւնը կայանայ: որովհետեւ մեր ապուշ և կարծեցեալ հայրենասէրների զլխաւոր նպատակը միութիւնը չէ, այլ լրտեսների կաշին ազատելը:

ՎԱՐԴՈ

ՎԵՐԱԿԱԶՄԵԱԼ ՀՆՁ. ԵՒ ՍԱՌԱՃԵԱՆԸ

Վաղուց մտադիր էի գրել այդ սեւագլուխի համար ու առիթի մը կը սպասէի. թէեւ մի քիչ ուշ սակայն առիթը ներկայացաւ: Անշուշտ ձեր թղթակից Պ. «Ծպտեալ» գրեց վերակազմեալ հնչակեաններու հրապարակային ժողովի մասին, իսկ ես պիտի գրեմ այն որ հոն ատենալսօսի մը բերնին մէջ դեռ Սառաճեան անունը պըս-պըզուն կերպով դուրս կուգար այնտեղ, որ ժողովրդի կողմէն կոկոնաւորուած երկու կուսակցութեանց վիճաբանելիք ժողովի մը պատրաստուելիք քայլեր կառնուէին. հոն ուղղակի ժողովրդին կը լծելագրէին այս ըսելով՝ «մենք ունինք առաջնորդ մը՝ Սառաճեան սրբազան, անոր դիմեցէք որ զայն ու ճշմարիտ ուղղութիւնը ցոյց տայ» ու անոր ըսածին հետեւի ժողովուրդը, անանկ չէ՞ պատուելի:

Գիտեմ թէ «Շարժում»ի ընթերցողները զլուսեցան այս սեւագլուխի գէթ անունը լսելէ, բայց ներեցէք, կարժէ որ մի քանի դիտողութիւններ եւս ընեմ այսպիսի վատ կղերի մը համար որ, դեռ շատերուն հաճելի է երեւցած, և կը սիրուի Արիփարագաւն յուսախարութիւն, փորձը

կը սկսիմ 1889էն մինչեւ 1893 թուականներու վերջերը Ամերիկայի մէջ անցուցած կեանքէն. այդ բարձր սեւագլուխ արարածի արարքներէն ո՞ր մէկը պատմեմ. բայց ամենալայն իմաստով, ուր ուր երթար հոն պառակտում մը կը ձգէր. հարկ չկայ հոս բերել փաստեր, որոնք արդէն լաւ ծանօթ են նոյն այս օրուան սիրողներուն: Գիտեն ու կը սիրեն: Բայց «ինչո՞ւ» մը կը ցցուի աչքիս. այս «ինչո՞ւն» պիտի ուղղեմ Չիթճեանի և իր համախոհներուն ու տեսնեմ թէ ինչո՞ւ կը սիրուի այժմ այդ հրէշը:

Գիտեմ, որովհետեւ ձեր այժմեան գաղափարին կուգայ, ու ալ անոր թերութիւնները, ետեւում հակուր գարձած էք. 1893 թուականներուն, երբ հարազատ հնչակեանութիւնը Ամերիկայի շուրս կողմին տիրացած էր, ու միեւնոյն ժամանակ կրակոտ յեղափոխականներ կը ճանչցուէինք, այն ստան յիշեալ «խախտման» հակայեղափոխական պառակտիչ մակդիրները տուրք տահա կուղէ՞ք որ ըսեմ. անչափ առաջ գացիք որ պիտի ինչպէս տեղն ու տեղը. այս կը խօսուէր նեղ շրջանակի մը մէջ, ինչպէս ըրիք ու ընել տուիք անկեղծ ու անձնուէր «Մուրատ Շիրուանը» Նիպոսի մէջ: Բայց այսօր միևնոյն բաղդին շարժանացած՝ խախտմը «ամենաիրեւի գերապատիւ Յովսէփ եպիսկոպոս Սառաճեան» դարձած է, ինչո՞ւ այս փոփոխութիւնը, Միթէ դուք միևնոյն մարդիկը չէ՞ք, թէ ոչ Գ. Զիթճեանը: Պալճեան կամ Մարկոսը թորոս կը ճանչցուի:

Ձե՛, պարոններ չէ՛. որչափ որ աստիճանը փոխուեցաւ ինքն ալ չի փոխուեցաւ, մի՛ շողորդէք. այդչափ մի քմիք ու ստորնանար վատի առջեւ: Գիտեմ թէ ձեր նպատակը ի՞նչ էր, դուք ուղեցիք ձեռք առնել զայն և գործիք դարձունել (ինչ որ ուղեցիք ընել ձեր ժողովին մէջ) ու անոր անունով շահագործել Ամերիկայի հայութիւնը, բայց դառն յուսախարութիւն, փորձը

ցոյց տուաւ որ այդ ծրագիրն ալ ճըլխ ելաւ:

Երբ հայրիկեան կոնդակը ձեռքը բռնած ու երեսին կարկտան ըրած՝ այն ոսկիները որ տուած էին Եւրոպայէն ճամբորդած պահուն Ս. Փրկիչ եկեղեցւոյ պարտուց համար՝ կուգար հոս դարձեալ մտատանջութեան մէջ էր: Փարիզի մէջ Արփիարի հետ երկար տեսակցութիւնը (որ բարեկամս գրած էր ժամանակին) շատ բան կարող էր ընել. միմիայն Արփիարի թողնելներու համար էր այդ, և սկսան գովել. իր փրնառածն ալ այդ էր. նոյնիսկ, այս գաղտնիքը մէջը նիս մնայ, Մարտ օրգանն ալ շատ մը գովեստներ շաւղեց, եթէ ճանչցածնիս չըլլար գուցէ հաւատայինք անոր յօրինած ներքոյներուն. սակայն այսօր Ամերիկայի մարտեանները իրենք ալ գիտցան որ յուսախափ եղան: Եւ մենք Ամերիկայի հայերս դեռ պիտի պահենք մեր ծոցին մէջ որ ծծէ մեր սախը: Ինչ կըսեմ, վերակազմեալներն զատ դեռ հինցած զլուխներ, և վերջին ծայր կղերասէրներ շատ ունինք, ու այս յիշածներուս աչքին Եւրոպայէն հաւաքած ոսկիները բերաւ իբրեւ թող փչեց ու եղաւ «լաւ» կղեր. այս կերպ ըսողներուն սա միայն պիտի ըսեմ որ, եթէ ուրիշ մը գար նոյնը պիտի չընէ՞ր հայրիկի յանձնարարութեան համեմատ, ու այսօր այդ ընելով լաւ եղա՞ւ. անցեալը մոռցուած չըլլար, բայց ներկային ալ որ միեւնոյնը ընել կը շարունակէ անոր համար ալ անցեալը կը փնտռուի:

Ընթերցող այժմ գանք ներկային տեսնենք թէ մինչեւ ցարդ դերասպատիւ խախտմը ի՞նչ ըրած է, ի՞նչ ճառալուծիւն մատուցած է իր հօտին. իրար չը խաբենք. քիչ մը անկեղծ ըլլանք, թուենք խախտմին տեսած ձանր գործերը որ ընթերցողն ալ ինձ հետ սքանչանայ: Պատուելի Մարգուկէսեան, Ղեւոնդ վարդապետի վերածեց, այս մէկ. Գ. Զիթճեանն ալ երբեմն իր գրագիրը. կարծես Պատրիարքարան մը եղած

ըլլար, այս երկու, Վ. Նահէնի իր ստորուկը այս երեք. ըսէք տեսնեմ, պաշտպանողականներ, առկէ կատ ինչ գործ ըրած է. քանի որ բարեմամ և աղքատախնամ ընկերութիւններ կազմակերպեց, ցուցուցէք խնդրեմ:

Չեմ կրնար զսպել ինքզինքս չը գրելէ, երբ Ուստրի եկեղեցիին մէջ ոտք դրաւ, ու առաջին պատեհութեամբ սա խօսքերը ըսաւ. «Երանի մեր այն նահապետական օրերուն երբ ամեն ոք կականածէր իր մեծերէն և կը հնազանդէր անոնց. և պէտք է նորէն ետ երթալ, ետ, ու նահապետական խաղաղ ազգը լինել, խելքերնիս գլուխնիս ժողովներ, եթէ ոչ այս շարիքներէն աւելի գէշեր պիտի կուտակուին մեր վրայ»: Այս տողերը գրած էին «Տիգրիս»ի թուերէն մէկուն մէջ իր ժամանակին, և որչափ որ կը յիշեմ խմբագրութեան կողմէն ծանօթութիւն մը ալ կար այսպէս. «արդեօք այս գաղափարին ծառայող մարդիկ շատ կան մեր առաւելագոյն ազգին մէջ, եթէ նահապետական խաղաղ ազգ մը դառնանք այս դարուն մէջ՝ քանի մը տարիէն մորթերնիս շուկան կելլէ»: Սա ալ ըսաւ «հիւսա եղածը եղած է, ես իբր առաջնորդ եկած կմ ձեզի համար, ուղէք չուղէք պիտի կենամ» և ըրաւ ալ, իսկ Ամերիկայի ընդհանուր բողոքականաց ազգային Մ. Ն. կըսէ, «հայեր, երանի թէ այս 20—25 տարւայ ընթացքին մէջ կրամ փոխառութիւններ 100—150 տարի առաջ սենեակիք և դուք այսօր ազատուած էիք»: Իսկ ընթացող այս խօսքերը բողոք ամերիկացիի արիւն կը կրէ, իսկ Սահման... հայ մը, վա՛յ մեզ:

Նորէն պիտի անդրադառնամ Չիթեանի և իր համախոհներուն հարցունելու թէ, ինչո՞ւ հարազատ Հնչակեանութեան ժամանակ զայն կը ճանչնայիք կատարեալ հակայեղափոխական մը ու հիմա՞ «քաղաքագէտ» յեղափոխական մը («...») ինչ որ էր անաչ՝ նոյն է այսօր անանկ չէ՞:

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Վ Ա Ն

ՄԵՈՑ ԱՆՔԱՆՆԻ ԱՆՅՐԵՐ, ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՅԵՏՈՅ, ՈՒ ՅԵՂԱՓՈՒՈՒԹԵԱՆ ԵՄԵՆՈՒՄ

Ե՛ր.

Վարդենիս գիւղի այդ առաջին ըմբոս քայլը, ամբողջ պաշտի հայ ժողովրդական ուշադրութիւնը այդ կողմ դարձուց. շատ անգամներ պարզ և գիւղական հարցումներ մէկգլխու կողմէ իրարու կողմէն թէ, «ինչ պիտի ըլլայ այս գիւղի վիճակը, քանի որ քրտականութիւնը զինուած է անոնց դէմ, վրէժառու-

դուք այսօր անոր քղանցքները համբուրելով համակերպեցաք. միթէ յանցաւոր եղա՞նք գաշնակցականները (Ամերիկայի) ձեզ ճանչնալով իբր հակայեղափոխական. թողունք սկզբունքնիդ. հոս դուք ձեր բերանով կը դատուիք: Ալ բաւ է պարոններ, հերիք է հերիք: Ձեր այդ կռկռոցի ձայները անհանգիստ ըրին Բարեկենսեր, Պետներ, կարօներ, Վաղգէներ, Արամներ, ասոնց յար և նման շատ մը հերոսներ, մենք ալ ասոնցմով պիտի պարծենանք, թողէք որ անոնք իրենց անկողնէն հանգիստ քնանան:

Ա. Ֆիլ, Լօրէնս, 17 Ապրիլ

Յ. Գ. — Սարածեան ստորուկ մը եւս ունեցաւ ճիշդ իր նման, Ֆիլիպէի խառնակիչ Արսէն վարդապետ տեղւոյս թեմին թեմակալ որոշած է, ըրաւ չըրաւ խօսքը առաջ տարաւ հրէշը. յուսով եմ թէ լօրենացի անոր ալ փայտուց ձեռքը պիտի տայ. կուղէ թող գայ:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

4. ՊՕԼԻՍ, 5 Մայիս

Անցեալ նամակովս հաղորդած էի, որ Օրմանեանի հրատարականի խնդրին առթիւ քանի մը «ազգայիններ» ժողով մը ըրին ուղերձ մը յղելու առ սոս հայրախնամ Համիտի. Աս լուրը Օրմանեան առաւ, լայց տարօրինակ երեւոյթ. աս միտքին հետ շուղեց համաձայնիլ:

«Կո ստորագրողներէն շատերը պաշտօնական անձեր են, ձեզի կրնայ փնտս մը հասնիլ. դուք տեղերնիդ հանդիստ նստեցէք, ըսեր է Օրման զատէն. ես տուեր եմ պատճառաբանեալ հրատարական մը, ես ալ մինչեւ վերջ կը պնդեմ, վստահ եղէք որ ես գործը մինչեւ վերջ յառաջ կը մղուղեմ» և ասանկով մեր Անպուհ էֆէնտիներու կամ աւազակ Տէր

թեան ծարաւով տողորուած, կուզեն իրենց գաղանային դառնութեան բաժակը, մէկ հայ գիւղի մը ժողովրդեան զլխուն թափել և բողոքողին ընաջինջ բնել. կառավարութիւնն իսկ ի վնաս շատնց կը գործէ. ուրեմն ի՞նչպէս պիտի կրնան ապրել, ասոր հետեւանք մինչեւ ո՞ւր պիտի հասնի: Սյպիտով օրեր ամիսներ կանցնէին, ասանց ո՞ր էր զէպք մը թէ այդ գիւղի և թէ իր սահմաններու մէջ պատահելու. իսկ միւս կողմէն, քրտականութիւնը յիշեալ գիւղէն իրենց արտաքուտելով, նա մանաւանդ աւելի հանելին, Մուսա պէյի և իր հետ դառնուած ամենէն աւելի քաջ, երկար տարիներու շարքին, հրապարակի վրայ նշանաւոր գողերու և մարդապահներու պարտուելն ու ամօթահար յետո նահանջուելն, ամբողջովին մեղացած էր. այլևս ինչ

Ներսէսեաններու ծրագիրը ջուրը ինկաւ:

Բնական է որ եթէ Օրմանի տեղ ուրիշ մը ըլլար, ես չի պիտի վարանէի գովելու ասանկ գեղեցիկ ու աչնիւ քայլ մը, բայց այժմ երբ Օրման զատէ Ալի փաշային հոգեկան ամէն պոտեղութիւնները հրապարակ ելած են, չեմ կրնար այնչափ միամիտ ըլլալ, որ այդ «ձէնդլմէնական» քայլը սրտանց համարեմ... Չէ՛ հոտ ալ թաքուն նպատակ մը, «յետին միտք» մը կայ, ու աս ալ դժուար չէ հասկնալը, եթէ իրումը մը կարծատես ազգայիններ քիթերնին խոթեն աս պատճառաբանեալ հրատարականին պատճառներուն մէջ, զանոնք նորէն վերագողրին նախագիծնորին աթուռին առաջ, ան ատեն Օրման զատէ պիտի պարտաւորուի աւելի ամուր փնալ իր «հրատարակութիւն» վրայ, իսկ եթէ ոչ ոք ձայն հանէ, ժամանակն արդէն քիչ մը մաշեցուցեր քիչ մը մոռացութեան տուրակին մէջն է խոթեր թէ հրատարականը թէ մանաւանդ անոր «պատճառաբանեալ» մասը. քանի մը օրէն ամէն ոք կը զազրի անոր մասին խօսելէ ու խորհելէ. ահա Օրման զատէ քիչիկ-քիչիկ զիջումներ ընելով տոտիկ-տոտիկ կելլայ նորէն մուսուռելու իր անձով պատրիարքական գահը: Աւ արդէն իսկ սկսուած է վերագործի գոնդալ «Բրօսէն». Օրման զացեր է Ասլիէ, արգարութեան նախարարին ու բանակցութիւններ ըրեր է անոր հետ, թէ և «չեմ կրնար» ըրէնէն չէ նետեր... Արդէն տունը մարդեր է ընդուներ, գործեր տեսեր է... կարծեմ մեծ տարբերութիւն մը չը կայ Գաղաղ Արթինի շինած Գուստաբուի խարտուլ պատրիարքարանը է եղեր թէ Օրման զատէի, Բերայի տունը. կամ տունը մարդ ընդուներ է կամ պատրիարքարանը... երբ երկու ընդունելութիւններն ալ պաշտօնական կը դիտուի:

Թեքուս մէկ երկու շաբա-

ընելիքնին չէին գիտեր, մինչեւ անգամ կը վախնային Վարդենիսի սահմանին իսկ մտնելու:

Երբ ամէնը ստանալով հայ գիւղացիին, իր գարաւոր սարկական վախն ու սխալ ենթադրութիւններու վրայ հիմնուելու տեսնելով, սկսաւ զգաստանալ և խելքը գլուխը հաւաքելով կամայ կամաց հետեւիլ Վարդենիսի օրինակին մասամբ. մասամբ կըսեմք որովհետեւ չունէր Մարգար մը, կամ անոր նման մը որ ուղղութիւն տար ու անքակտելի կապով մէկգլխու կապէր և առաջգնացութեան առաջնորդ էր. հետեւաբար չի պիտի կըրնար ընել այն, ինչ որ Վարդենիս ըրաւ. միմիայն ստոր դարմանը իրարու կապուելու մէջ կրնար որոնել, որով Վարդենիսի շրջակայ գիւղերու երիտասարդութիւնը հեռագիտէ սկսաւ մէկգլխու մերձենալ, և այս-

թէն Օրման զատէն սողալով սողալով նորէն հասած ըլլայ Գուստաբուի աթուռը. աս ամբողջ տարածութեան մէջ «լիւրելու» իր թքածը, լիւրելու աս ուսան թուրք պէյի ու փաշայի գարշապարը. «Աս պատրին աս ձեռքն ալ կը վայելէ» կըսէ առածը:

Նորէն Նիքոլա Չարին «եա ազը պակաս է, ես մաղը»:

Եր տոմարով Մայիս 8ին Ռուսական զեսպանի փոխանորդը գիր մըն է ներկայացուցեր Բ. գուռը, որով կը պահանջէ որ Ռուսիոյ հայերու առաջ բացուին թուրքիոյ սահմանները, անոնց շարքիլուի առեւտրական գործերով ել ու մուտք ընել թէ կովկասեան սահմաններէն և թէ ծովէն դէպի թուրքիա:

Արդեօք նորէն ինչ սուր մը կուղէ փրցնել Չարի կառավարութիւնը Համիտէն, որ հայերու ուրուականը խնչարի մը պէս կը ցցէ Համիտի հիւանդ երեւակայութեան առաջ զայն ահաբեկելու համար:

Ապրիլ 23ին Աստրիական զեսպանտան զինուորական կցորդ ժէնէրալ Կլիւս Կլիւսիկէր ուղեւորուեցաւ «Հայաստն և Քիւրտիստան» զինուորական խել մը ուսումնասիրութիւններ ընելու համար. Մինչեւ օրս Պիլմարքին և Մօլթէի ձագուկներն էին այդ տեսակ ուսումնասիրութիւններ կատարողները, այժմ ալ աւստրիացիներն սկսեր են... ու աս ալ Աստրիոյ կողմէն, ադ ներքենապէս հիւանդ ազգայնական խնդիրներով բղբոտած հիւսախտոգ պետութեան կողմէն... ԲՍԺ

Փ. ՊՕԼԻՍ, 30 Ապրիլ

Վառնա հրատարակող կիսաշաբաթաթերթին մէջ տեղեւ երկուող մը կար նորընտիր հոգաբարձուներու վերաբերմամբ նամակագրին հաղորդած վարնոց

պիտով քանի մը գիւղեր իրարու կապուեցան:

Մուսա պէյ այս ամէնքը կը տեսնէր. վանդակի մէջ փակուած առիւծի նման կը մոնչէր, վրէժառու ծարաւով մը. բայց բան մը չէր կրնար ընել, քանի որ երկուսն ստորուկն այսօր ասպետ մը դարձած էր. իր հարիւրաւոր տարուան անտարբերութեան յանցանքն քաւելու համար հրապարակ անցած էր, զէնք ի ձեռին իր իրաւունքն պաշտպանելու և միանգամայն իր դարեւոր վրէժը լուծելու, ի հարկին:

Պիթլիսի և Մշոյ կառավարութիւնը զինուորականութիւն և ամբողջ տաճկութիւնը իր կողմն ըլլալով էր, որ այդ անխիղճ գաղանկութիւնները գործեց Մուսա պէյ. այդ տեսնելով Մշոյ գաղտնի հայութիւնը ցնցուեցաւ և Մշոյ առաջնորդա-

սուտերը զիս կը հարկադրեն պարզել թէ ինչ հանգամանքներու մէջ կատարուեցաւ այս ընտրութիւնը :

Ընտրութեանց նախորդ օրը հակառակ կուսակցութեան կողմէ երկու անձեր որոնք վարժարանին հողաբարձուներէն էին, մեզ դիմեցին և առաջարկեցին համաձայնութեան մը գալ իրենց հետ ընտրելիներու մասին : Մենք յօժարակամ պատասխանեցինք իրենց դիմումին և հինգ անձերու վրայ համաձայնելով բաժնուեցանք :

Ուրեմն յաջորդ օրուան քուէները երկուստէք ընդունուած այդ հինգ անձերու միայն պիտի տրուէին :

Սակայն յաջորդ առաւօտ իմացանք թէ այդ համաձայնութեան փախազույնները իրենց խօստումը դրժելով, որոշուած ընտրելիներու ցանկ մը սկսած են քուէարկել : Մենք ձեռնպահ մնացինք, որովհետեւ միայն ընտրուելը չէր բաւեր, պէտք էր գործել, և համոզուած էինք որ առանց համաձայնութեան ընտրուած աղջային մարմին մը, երբ իր քրտահանքին գերի դարձնել ուղէր վարժարանը, երբեք չի պիտի կարողանար իր շահատակութեանց ասպարէզ գտնել :

Մեր ձեռնպահութեամբ և լոկ հակառակորդներու կողմէ ընտրուածներն էին, Տեարք Յակոբ Աղամբան, Արարհամ Թօփուգպաշեան, Գէորգ Թէպէքէլեան, Յովհաննէս Գանթարեան և Առաքել Գալաղեան :

Մենք բողոքեցինք այս ընտրութեան համար կառավարութեան առջեւ, ինքրելով որ բեկանուի, որովհետեւ բաց ի մէկէն ամբողջովին անուս և տգէտ անձերէ կազմուած էր : Վերջին երկուքը մեզի համար ընդունելի էին, մին իբրեւ զարգացած ու կարող անհատ մը և միւսը իբրեւ բարի, աշխատող ու ազնիւ անձնատրութիւն : Բայց միւսները, մանաւանդ առաջին երկուքը, նախատինք ու հայհոյանք էին պարզապէս մեր վարժարանին համար : Թփուգպաշեան ըսածը այնպիսի արարած մըն է, որ բարանի մը տարած լինելու համար իր անհատականութեանը հետ զոտարկուած լինելու համար իր անհատականութեանը հետ զոտարկուած լինելու համար իր անհատականութեանը հետ զոտարկուած լինելու համար :

նին համար : Թփուգպաշեան ըսածը այնպիսի արարած մըն է, որուն զարհուրելի տգիտութիւնը անպատկառութեանը հետ միացած հրէշային տիպար մը կը կազմէ : Իսկ Յակոբ Աղամբան այն հանրածանօթ «թուրքն» է, որ քանի մը տարի առաջ տաճիկ շինարարներուն ի նպաստ դրամ հանգանակելէ և անոնց սուրին «քէսկին» ըլլալուն ազօթելէ ետքը ասկէ քանի մը ամիս առաջ ալ «արզուհալ» մը ձեռքը դուռնէ դուռ պտըտելով առ ու ան համուզել կը ջանար, որպէս զի դատ բանան վարժարանին տնօրէնին դէմ, որ իբր թէ տղաքները անլինայ կը ծեծէ եղեր, խօստանալով զատուկան բոլոր ծախքերը վճարել :

Պ. Կայծ, որ ձեր պատասխանին մէջ պարկեշտութեան կայծ մը անգամ չէք դնել, եթէ այս տեսակ անպատիւ ընտրութեան մը դէմ բողոքելը «բաւել» կը համարէք, ո՞վ գիտէ ի՞նչ անորակելի բառերով պէտք է որակել ձեր լիրբ կեղծումները և սրիկայի բացազանչութիւնները, որոնք կերեւի ձեր գրութեան զարդը և ձեր հոգիին գոհարը կը կազմեն :

Յառաջիկային առիթ կունենանք ձեզ հետ աւելի երկար տեսնուելու : Առայժմ կը մաղթեմ որ «պարիք ու տեսնէք» :

Յառաջիկային մը

ՃՐՁԻ, 24 Ապրիլ

Անցեալ թղթակցութիւնովս Շարժումի ընթերցողներուն ծանօթացուցած էի Սարաճեանը իր գործերով հանդերձ, ու խոստացած էի հետևութիւնն ալ հաղորդել :

Սրբազանը (եթէ երբեք արժան է կոչուելու) Ուէսթ-Հոպօքընի մէջ համատ ծծ մը սրբէէ ու կոկիկ խայտառակուելէ վերջ, կը խորհի իր ըտտր ընդունածները վերագրել այնպիսի անհատի մը, որն իր գնդապետութեամբ արդէն ծանօթ է հայ հասարակութեան : Կայ մը խաւարմած ու հեղձուցիչ մթնոլորտէն դուրս ապրող, անկեղծ ու ազգանուէր, որով յիբիլի դարձած է ժողովուրդի մեծամասնութեանը : Ալ որո՞նք պիտի կլինեն մեքենայուած սուտերը (ի հարկէ

այնպիսիները միայն, որոնք ստիպուած են ծուր թէ շիտակ գրուելու ծուր ու հետեւի Սարաճեանը) : Այստեղակ սուտերը չուտով հերքուեցան Հայրենիքի մէջ, ուստի ալ հարկ չիկայ ծանրանալ անոնց վրայ :

Սարաճեան իրեններուն հետ խորհրդակցելով, կորոշէ եկեղեցւոյ խնդիրը կարգադրելու համար դուրս ձգել անհաւատները : որոնք սասնի չափ են (իր կարծեքը) : զժբարխտար թէ բարբախտար որոշուած օրուան (ժողովին օրը) արեղակը կուշանայ : Վերջապէս Սարաճեան ժամանակ կունենայ ունկնդրելու չեղոք ու պատուաւոր անձ մը : ան ատեն կը տեղեկանայ իրեն գիտցուցած անհաւատներու : Թիւր ո՞չ թէ ասան է, այլ . . . 50է աւելի ու 10—15 ընտանիքներէ բաղկացեալ : Սրբազանի ու արքայանկի տան հաշիւները ջուրը կիյնան : երկրորդ որոշումով խընդիրը կը յետաձգուի մինչեւ երկու կողմիներու միանալը : Վերջին խորհուրդը լաւ : Բայց երբ, զժտու թեան սերմը ցանկէ՞ յետոյ :

Նախկին խայտառակութիւնը գրքուած էր Հայրենիքին ու Ջայնին նաեւ : Առաջինն մէջ կարգադրեցին, ինչ որ իրական էր, իսկ վերջինը իրական մը ըլլալէ խօսքով կը դադարէր : Երկու պոչուոր ու անհաւատալի սուտերու զեղուն յոգուածներ էջեր գրուած էին այնտեղ, այնպէս որ ականատեսներն անգամ կը զարմանային ըսելով, կամ դար առաջ պատահած զէպրի մը նկարագրութիւնն ըլլալու է կամ վէպ մը : Ըսածներս հաստատող փաստ մը միայն մէջ բերեմ. ստալից յոգուածները որքան որ Սարաճեանի կամքին ալ մօտ էր, բայց խոշոր փուշերը շատ դժուար պիտի ըլլար կլլեցնել ընթերցողին եւ երբ Ուէսթը հասաւ փութացնոյնինքն հերքել անմարս սուտերը : Այս միայն կը բաւէ ասպցուցանել թէ հոն հրատարակուածները լոկ սուտեր են եւ ուրիշ ոչինչ : Եթէ փափաքողներ քիչ մը ձանձրոյթ յանձն առնեն ու նոյն թերթի քանի մը թիւերը ուշի ուշով քննեն, չուտով պիտի համոզուին ու հաստատեն զրաններս :

Կայն թերթին մէջ մէկը իրեն բան գործ ըրած է բառարանէն խոշոր ու փայլուն բառեր հաւաքել, սուտերու եւ զրպարտութիւններու հետ շաղախելով իբր առաջնորդներ իմբագրել : ուրիշներ ալ իրենց խելքին փչածովը շարաթներով էջեր կը սկսեցունեն : շատ բնական պիտի ըլլար եթէ ասկէջ վերջ Ջայնը «սուտերու օրգան» ընդունէինք : Արդարեւ «Ջայն կղերաց» ըլլալը անուրանալի

է : զի հայրենիքի ձայնը չը տալէ զատ միայն կղերներու ձայնն է որ կը հնչեցնէ : Սաւաճեանի ցաւ պատճառներն ալ ճշմարիտ է, ինչու որ ով որ ալ ըլլայ այն ճղճիմ գրուածքները քաղաք, սուտերն ալ պիտի ցաւի, ուղեղն ալ խանգարի : սակայն ասանց միջեւ յարմարագոյնն է կոչել «Սուտերու օրգան» որովհետեւ անկայ ինքն է սուտերու աղբիւրը եւ սեւ զրպարտութիւններու վայրը : սուտերու մեծ մասը հոն կը ստեղծուին ու այլազան կաղապարներու մէջ ձուլուելով լոյս կը ճնծայուին : հետեւապէս բնական է անուանել այնպէս : Առայժմ այսչափ :

Ուէսթ-Հոպօքընի ազգային նորահաստատ անդամիկ զպարսը, շնորհիւ զարգացեալ երիտասարդներու, մանաւանդ նորընտիր վարչութեան, իր պակասը լեցուց—Տ. Թովմաս Չարշափճեան օրինաւոր եւ հիմնական դասատու կարգուելով—որն շարաթուան չորս օրերը, օրը երեքական ժամ կը դասասուէ երկուսն մանուկներուն : մայրենի լեզու, ազգային պատմութիւն եւ իրազխտութիւն : նոյն զիշերներն ալ երեքական ժամ կը դասասուէ երիտասարդներուն, ազգային, ընդհանուր եւ հայ գրական պատմութիւն, քերականութիւն, կուսուցանէ նաեւ անգղիերէն լեզուն :

Շնորհակալութիւն պատուարժան վարչութեան որ պիտեալ յարգել իր կոչումը : Տեսնենք այս անգամ զբարոցի հակառակորդները ի՞նչ դարան պիտի լարեն անիկայ խափանելու :

Սակայն վարչութեան ընտրուելէն մինչեւ հիմայ իր լուրջ գործունէութեան ու շրջահայեցողութեանը յենլով, անհոգ եւ ուրախ կը զոցեմ նամակս :

ԻՄԻՆՈՇՏՆԻՒՄ

ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼ

Վերջապէս ուրախութեամբ կուգամ յիշատակել սոյն էջերու մէջ թէ, Եաչի հայոց թաղական խորհրդոյ ատենապետ Տ. Գրիգոր Պուլուքիւ, եկեղեցւոյ գանձէն գումար մը զրկած է պատրիարքարան ի նպաստ Հայաստանի կարօտելոց : Ի՞նչ բարի գործ : այսպէս Եաչի պաշտօնական մարմինը նկատի առնելով Հայաստանի նօթի եղբարաց ցաւալի վիճակը փութաց իր պարտքը ճանչնալ ու օգնութեան

բանի միջոցաւ, Մուսայի, կառավարութեանց, զինուորականութեան և տաճկութեան դէմ կուռելով, հազիւ թէ կրցաւ այդ գազանը Պոլիս տանել տալու :

Մուսայի հետացումը, փոխանակ Մանթէտականութեան վրայ աղղեցութիւն գործելու, որ այլևս այդ տեսակ գազանութիւններ չը գործուէին, ընդհակառակն վրէժառութեան ոգով դրդուց : Մշոյ աշխարհը օր ըստ օրէ գէպի անիշխանութիւն առաջնորդուեցաւ : կողպուում, առեւանգում, մահմէտականացում, մարգասպանութիւն այլևս սովորական բաներ գարձան, մինչեւ 1890 թուական :

1888—89 թուականներուն, բողոքներու եւ շարժումներու իրարու ետեւէ յաջորդելի՛ն երթալով սուր կերպարանք կառնուր : Բ. Գուրը յեղափոխութեան պոռակուումը սեանե-

լով, 1889 թուականին, աշիբէթ քերթ աւազակներ Պոլիս կանչեց : ատոնց մէջ Համիտիէի կազմակերպութիւն մը ընելով՝ նուէրներով, պատուանշաններով եւ բարձր պաշտօններով յետս դարձուց, հայերը ջնջելու համար : միւս կողմէն Արիֆ փաշան Պոլիս կանչեց եւ անոր տեղ ետևուք փաշան, որ Պէրուքի կուսակալութիւն կընէր՝ Պիթլիս փոխադրել տուաւ, որպէս զի ետևուքը իր ճարտիկ խորամանկութեամբ միջոցներ ձեռք առնելով, ըստ կարելուոյն ժամանակ ևս քաջքչը որ Բ. Գուրը միջոց չահելով իր հայաշինջ ծրագրին գլուխ հանել, Համիտիէի հեծելազօրաց միջոցաւ :

Գալով Յակոբ սարկաւազին, որ բունուած եւ բանտարկուած էր մահսէրազրութեանց պատճառաւ, երեք տարի պայմանաւոր լրանալուն

պէս, կրկին դատարանը վճեց տեղափոխման պատժոյ—կարնոյ կուսակալութեան գաւառներէն միոյն մէջ ասորիլ մինչեւ ցմա՛ն : այդ մասին կարնոյ կուսակալը օրէնքի գործադրութիւնը ի գործ դնելով, կնուս գաւառի մէջ հաստատուելու արտօնութիւն շնորհեց : Սարկաւազը կնուս փոխադրուելով, հայ գիւղերէն Տոււման ըսուած գիւղի մը մէջ հաստատուեցաւ : երկու երեք տարի շունչ առնելու համար հանգիստ նստաւ : 1888—89 թուականներուն կրկին սկսաւ շարժիլ, ձգելով կիւր եւ զաւակները կնուս, Մուշ անցաւ իր վեհ ու խաղ ի գլուխ հանելու : Սկսաւ գիւղէ գիւղ պտըտիլ ետանդ եւ ոգեւորութիւն ժողովրդեան մէջ ներշնչելու : այդ միջոցներուն կառավարութեան հայոցս դէմ լարուելը, Մուսայի արտաքուումը սուր կերպա-

բանք առած, եւ երկիրը բոլորովին անիշխանականութեան մատնուած, այսօր վաղը մեծ մեծ աղէտներու կը սպասուէր, այդ սարսում եւ անորոշ վիճակի մէջ սարկաւազին Մշոյ գաշախին մէջ երկուալը կառավարութեան անհանգստութիւն պատճառեց, որ ժամ առաջ միջոցներ ձեռք առնելով, ոտակականներէ եւ զօրքերէ խառն զոր-սկիւստիներ դուրս բերաւ, սարկաւազին սպաննելու կամ կրկին ձերբակալելու դիտումով : լաւ համոզուելով որ եթէ սարկաւազը երկար Մշոյ գաշախի մէջ մնայ, շատ մը աղետալի հետեւանքներ դուրս պիտի գան : եւ իրենք պիտի դժուարանան ստալքն ստնել :

ՄԱԿՍՐ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

(Շարունակելի)

հասաւ այն խեղճ արարածներուն եւ բարեգործական «առաջին քայլ»ը առնելով օրինակ հանդիսացաւ Ռուսական իրոյ միւս հայաբնակ քաղաքաց պաշտօնական մարմնոց, որպէս զի առնալք ալ իրենց քունէն սթափելով շանան ճանչնալ իրենց պարտքը ու օգնութեան շուտ հասնին եւ իթէ զլաւնալով պարտազանց գանուին, ամօթով պիտի մնան . . .

Ուրիմն կը բաղձամ ի սրտէ որ Ռուսական իրոյ բարեգործաց պաշտօնական մարմինք ալ չի հեռացունեն իրենց աչաց անջեւէն, եւ չի թողականաց սոյն «առաջին քայլ»ը ու շտապեն իրենք ալ ըլլալ երկրորդ, երրորդ . . .

Այո՛, գովելի է եւ չի թողական խորհրդոյ պարտաճանաչ գտնուիլը, սակայն դաւալի է որ տակաւին նաչի հայք չը կարողացան ճանչնալ իրենց պարտքը եւ չեմ գիտեր թէ ե՞րբ պիտի զգան ու կատարեն :

Գիտեմ, ո՛վ եւ չի հայեր, որ գուք եւ չի մէջ փտաւորապէս «եւաչան միջ» կըլլաք, բայց չէք յիշեր թէ թուրքոյ մէջ գտնուող ձեր անօթի եղբայրներէն ոմանք ալ կը «թրքանան» :

Հակահրէական շարժումէն յետոյ՝ բոլոր Ռուսական քաղաքներէն, այժմ հրեայք օրէ օր կը գաղթին դէպի Ամերիկայ ու Անատոլ, իրենց առաջնորդ ունենալով «սիօնական» ընկերութիւնը : Կերջերս քաղաքիս հրեայ երիտասարդներէն երկու հարիւր հոգի ուխտած են ոտքով Համպուրկ երթալ ու անկից ալ նոր Աւետեաց երկիրը :

ԱՐՄԱՒԻՐ

Եաշ Յ Մայիս

ԺԱՄԱՆԱԿԸ ՀԱՍՄԾ ԶԷ՝

Երկու պօէրուհիներ հեռագրով այս հարցը ուղղած են Թրանսօվալի նախագահ Քրիսկէրի՝ որ քանի մը ամիս առաջ պատերազմին մասնակցել ուղղով կիներուն յայտարարած էր թէ՛ երբ թշնամին իր ոտքը դնէ Թրանսօվալի հողին վրայ, այն ժամանակ կիներուն պիտի թոյլատրուի պատերազմիլ :

Այժմ պօէրներու գործերը այնպէս միայնուն չեն, ինչպէս որ քանի մը ամիս առաջ էին. ընդհակառակը շատ դէշ վիճակի մը մէջ կը գտնուի Թրանսօվալը. կատարեալ, անկասկածելի և անխուսափելի վտանգին մէջ է. ու պօէրուհիները կուգան իրենց առաջարկը նորոգել. պօէրուհիներու բանակ մը կազմել անխիղճ և անդրդուելի հուժկու հակառակորդին դիմադրելու համար :

Սքանչելի երեւոյթ . . .
Կիները, ամէն բան մոռցած, կուղեն զէնքով ու վառօդով կըլուուելի իրենց հայրենիքը պաշտպանելու և իրենց սպաննուած սիրելիներու վրէժը լուծելու համար :

Այս հրաշալի իրողութեան մասին լսելով կանգարագունամ մեր հայերուս վրայ, ու կը տեսնամ ատոր բոլորովին հակառակ պատկերը : Մեր մէջ ոչ միայն կիները անտարբեր են դէպի հայրենիքի պատեր և ազատութեան գործը, այլ և միլիոնաւոր այր մարդիկ : Մեր մէջ ոչ թէ թշնամու դէմ կը լարենք մեր ուժերը, այլ յեղափոխութեան մենք կը ոգեւորուինք ոչ թէ ազատութեան և պատուոյ ու արիւնի վրէժխնդրութեան գաղափարով, այլ սեւ նախաձիւք, սուտի և ըրբութեան : Մեր յեղափոխական կիները զբաղուած են ամենապարզ իսկ չարժանի վիճակի մէջ է : Մենք յեղափոխականներն որ ունինք որ պօէր կիներու ոտքերու ազալ իսկ չարժեն : Մեր մէջ ազատութեան և ստորութեանները են որ կը թագաւորեն :

Մեր պատեր և ազատութեան գործը, այլ և միլիոնաւոր այր մարդիկ : Մեր մէջ ոչ թէ թշնամու դէմ կը լարենք մեր ուժերը, այլ յեղափոխութեան մենք կը ոգեւորուինք ոչ թէ ազատութեան և պատուոյ ու արիւնի վրէժխնդրութեան գաղափարով, այլ սեւ նախաձիւք, սուտի և ըրբութեան : Մեր յեղափոխական կիները զբաղուած են ամենապարզ էն թիրքներով, գաղափարական քոյով ծածկուած . . .

Ու կը պարծենանք մենք թէ հայրենասէր ենք, զոհեր տուած ենք, խաբուած ենք :

Ոչ մեր մէջ հայրենասիրութեան և ազատասիրութեան գեռ սաղմային վիճակի մէջ է : Մենք յեղափոխականներն ունինք որ պօէր կիներու ոտքերու ազալ իսկ չարժեն : Մեր մէջ ազատութեան և ստորութեանները են որ կը թագաւորեն :

ՀԻՒԼԷ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Սերպիական գեոպանը Բ. Դրան ազգու բողոքագիր մը տուած է այն առթիւ որ Սերպ-Թուրք սահմանադիտուն թուրք զինուորները երեք սերպ զինուորներ սպաննած են :

Բողոքագրին մէջ Բ. Դրան պատասխանատու կը ճանչցուի :

— Պօէրներու պատգամաւորութիւնը հասած է Նիւ-Եօրք. ամերիկացիք մեծ ոգեւորութեամբ ընդունած են պատգամաւորութիւնը :

Պատգամաւորութեան գլխաւորը յոյս յայտներ է որ Ամերիկան հաշտութեան միջնորդի դերը պիտի ստանձնէ : Պատգամաւորութիւնը պիտի աշխատի որ Միացեալ Նահանգներու նախագահէն ընդունուի :

— Փրանսացի գիտնական Սարգակ, որ գացած է միջագէտք հնախուրդական պեղումներ ընելու, Պաղտատի քովերը գտած է Բաբելոնի Ուր-Նինա, որ Քրիստոսէ 4000 տարի առաջ կապէր՝ թագաւորի պալատի ներքին յարկը և շատ մը նախնական ժամանակներու գործիքներ :

— Եւրոպական թերթերը կը հաղորդեն թէ Մէյք-Կինգ անձնատուր եղած է. Սալիզպրի որդին Լորտ Օէսիլ և նշանաւոր թղթակից տիկին Ուիլսըն գեբի բռնուած են :

— Գերմանական թերթերը նախանձելով Ֆրանսացոց յուրահանդէսին որու համար շատ մը օտարականներ պիտի գան Փրանսա, կը միտնալուին անոք որ շատ մը եւրոպական վեհապետներ ալ Պերլին եկան և պիտի գան գահաժառանգի շարժաստ լինելը շնորհաւորելու :

Վայ գերմանական թերթեր,

մտքի և աշխատութեան յուրահանդէսը կը համեմատեն իշխաններու յուրահանդէսի հետ :

— Իօհաննէսպուրի գունդին մէջ կը գտնուի եզեր ծայտեալ պօէրուհի մը : Հարցաքննութեանէ իմացուեր է որ այդ կինը ամուսինը գացեր է պատերազմելու : Ինքն ալ այր մարդու զգեստներ հագնելով զինուոր գրուած է, Սպիտքօրի քով եռանդուն կերպով պատերազմած է. միայն վերջերս իր սեռը հասկցուած է. և որոշած են զըրկել իր տունը : Խուռն ամբողջ գացած է երկաթուղիի կայարանը ճամբու գնելու : Բայց ան երդուած է շարունակել պատերազմիլ, աւելցնելով որ իրեն համար զերգատելի է հայրենիքի համար կռուիլ քան թէ իր տանը մէջ հիւանդ մնալ :

Ն. Ա. Մ. Ա. Կ. Ա. Տ. Ո. Ի. Փ.

Ամերիկա, Տ. Արմենակ Ոսկերիչեան. — Ձեր փնտաւած անձին հասցէն է՝ Պուրկազ Սէքսանտր փողոց, քաֆէ Ղազար Միկոեան, թիւ 254, անտի Չարանեան Յակօր :

Թ. Ա. Տ. Ր. Ո. Ն. Ա. Մ. Ր. Ա. Ա.

Այս գրչիւր ժամը ճիշդ 9/2ին արտաքոյ կարգի շքեղ ներկայացուցին «Վէսէլ» հայ-գերբասական բաժին, ի նպաստ Վառնայի ազգական կրթարանի, «ՄԱՐԻ ԺԱՆ» կամ Առաքելի մօր մը տառապանքը բարոյալից և ընտանեկան թատերախաղի ցարար :

Այս առթիւ «Վէսէլ» խումբը պարտք անհրաժեշտ կը համարի հրապարակաւ իր խորին շնորհակալութիւնը յայտնելու Վառնայի պատուարժան թատերասէր հասարակութեան որ ձմեռնային եղանակին չի զլացան իրեն քաջալերութիւնը :

Խումբը վաղը կը մեկնի ի Ռուսոնք ամառնային եղանակը անցունելու եւ իր առաջին ներկայացումը պիտի տայ յառաջիկայ կիրակի Մայիս 14ին կէս օրէն վերջը ժամը 6ին «Կրասնիա Լոմ» Տ. Միհրան Մինասեանի պարազին մէջ :

Հ. Ս. Է. Փ. Ր. Կ. Ա. Ն.

Բնաշխարհիկ թատարան 1900 Վեներիկ Ս. Ղազար, Լոյս տեսած է այս ընդարձակ գործին առաջին քսանութիւնը պրակն, որ կը բաղկանայ 160 երկսիւն էջերէ եւ զարգարուած է 80 լի չափ խնամատիպ պատկերներով : Կը պարունակէ մեր երկրի նահանգաց, գաւառներու, քաղաքներու, վանքերու, գիւղերու, գետերու, լիճներու եւ այլ նշանաւոր տեղեաց վրայ, աշխարհագրական, պատմական, հնախօսական եւ այլ կարեւոր օգտակար տեղեկութիւններ : Առաջին պրակի գինն է ճանապարհի ծախքով 3 ֆրանք կանխիկ :

Հասցէ՝
direction de l'Imprimerie arménienne
St. Lazare Venise

Ա. Ջ. Դ.

Ընթերցարանի դասախօսութիւններն սկսած են. ուսանիլ փափաքողները կարող են միշտ երթալ հսկող պաշտօնիային քով արձանագրուիլ :

Պուրկարեւէն և Ֆրանսերէն լեզուներով կը թարգմանուին և կը գրուին վոքերիկ փոխարմէքով ամէն տեսակ նամակներ և գրութիւններ Վառնայի ընթերցարանէջ :

Մ. Ջ. ի հրատարակած Հովասուն և Թովմաթուր անուն գրքքոյկներու հասոյթը նուիրած է հեղինակը տեղւոյս ընթերցարանին :

Կը ծախուին Վառնայի ընթերցարանին մէջ :

Ընթերցարանի Չորքչափիթի օրերը յատկացուած է կիներու :

« Շ Ա Ւ Ի Ղ »

Շախիլ ձեռքէ չի ծախուիր, Բաժնեկիւն է՝ Պուրկարիոյ համար 10 ֆրանք, արտասահմանի համար 12 ֆրանք, Ամերիկայի համար 2 1/2 տուար :

Հասցէն՝

Rédaction de la revue «Chavigh»
pensionnat Arménien
Varna

Ա. Ջ. Դ.

Շարժումի խմբագրութեան մէջ կարիլի է բաժանորդ գրուել Փարիզ հրատարակուող «Հայկական ժողովրդական երգերի հաւաքածոյին» :

Պուրկարիոյ համար պայմանները. Տարեկան 6 գիրք 32 ֆրանք կարիլի է մաս մաս վճարել : Ա. գիրքը ստանալուն 12 ֆրանք Բ. գիրքը ստանալուն 10 ֆրանք Գ. գիրքը ստանալուն 10 ֆրանք Ամէն մէկ գիրքը ստանալին 6 ֆրանք

ԸՆԴԱՐՁԱԿ ԵՐԳԱՐԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՄ ՀԱՄԱԿԱՄՈՅ

Հին եւ նոր Ազգ. երգերու գին 2 ֆրանք երգարանը կը ծախուի Վառնա, Ա. Չարպիւնէլեանի գրատունը նաեւ կը գտնուի ամէն տեսակ զարդական եւ վրայական գրքեր. գրամի փոխարէն կը զուգուի նաեւ նամակագրոյ՝ Գնում եւ վաճառում ամէն տեսակ գործածուած նամակագրոյններու : Նաեւ Շարժումը կը ծախուի Ա. Չարպիւնէլեանի գրատունը եւ իւրեքագրութեան մէջ :

Նոյնպէս Շարժումը կը ծախուի Մուսալլա Ա. Գարունօֆի խանութի :

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «Ն. Ա. Ր. Ժ. Ո. Ի. Փ.»

Կը տպագրուին ամէն լեզուէ այցիտումս, հասցէտումս, նամակագրութիւն, հարաւանեկան հրատարակիչ, մահապղք :

Գիները յոյժ գիւրամատչելի. Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշգուրթեամբ և փութով կը կատարուին :

ՅԱՆՁՆՊԱՐԱՌՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԵՆ ԻՍԻԿ

Печатьна «Всѣмнѣстѣ» Варна